


ԱՐԱՐԱՏ ԱՂԱՅԱՆ, Կոմիտասը հայ նկարիչների և քանդակագործների աչքերով, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019, 49 էջ+38 էջ նկար:



Իր ծագման ու ձևավորման սկզբից ևեթ մարդկությունն ունեցել է և ունի խորհրդանշային մտածողություն: Ձևափոխված ու քողարկված խորհրդանիշներն ամենուր են՝ ժայռապատկերներում, պարի շարժումներում, նկարների գույներում, բանաստեղծությունների տողամիջում, ազգային ավանդույթներում, կրոնական ծեսերում, մինչև իսկ կենցաղային սովորույթներում: Մենք խորհրդանշի ենք վերածել այն, ինչ չենք կարողացել բացատրել, խորհրդանշի ներքո ենք թաքցրել այն, ինչ չենք ցանկացել բարձրաձայնել: Պատմության քառուղիներում մենք խորհրդանիշեր ենք ընտրում, որ ճանաչելի և նշանակալի դարձնենք ինքներս մեզ, մեր տոհմը, մեր ազգը, մեր պետությունը:

Իսկ երբեմն էլ սիմվոլներ ծնվում են:

Կոմիտասը հայ ժողովրդի համար ավելին է քան երգահանը, բանահավաքը, մանկավարժը կամ հետազոտողը: Նա մեր պատմության, մշակույթի և հոգեկերտվածքի խորհրդանիշն է: Իր ազգի նման ստեղծարար ու պրպտուն Կոմիտասը նույնպես մասնակից էր իր ժողովրդի մեծ դժբախտությանը: Հայության խեղաթուրված ճակատագիրը մեկընդմիջտ կտրեց Կոմիտասի ստեղծագործ ջիլը: Բայց այն, ինչ արդեն հասցրել էր անել Մեծ հայրը հավերժացրեց նրան մեր պատմության էջերում: Կոմիտասի կերպարը դրոշմվեց մեր ազգային հիշողության մեջ, դարձավ խորհրդանիշ և արարման ուժ տվեց հայ գրողներից, կոմպոզիտորներից, նկարիչներից և քանդակագործներից շատերին:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, Արարատ Աղայանի «Կոմիտասը հայ նկարիչների և քանդակագործների աչքերով» գիրքը մեկտեղում է այն հայ արվեստագետներին, որոնք իրենց ստեղծագործության մեջ անդրադարձել են կոմպոզիտորի կերպարին: Գիրքը հրատարակվել է Կոմիտասի 150-ամյակի առթիվ՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ և ՀՀ ԳԱԱ հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի աջակցությամբ:

Նման պատկերագրքի կազմումը, հիրավի, դժվարին աշխատանք է, քանզի նախ և առաջ հեղինակին կանգնեցնում է բարդ ընտրության առջև՝ ի՞նչ ստեղծագործություններ ներառել և ինչպե՞ս հակիրճ ու միաժամանակ ընդգրկուն ներկայացնել ընտրված աշխատանքները: Այս հարցի լուծումն Արարատ Աղասյանը գտել է՝ գրքում տեղ հատկացնելով այն գործերին, որոնք առանձնանում են թե՛ գեղարվեստական արժանիքներով, թե՛ պատմամշակութային և վավերագրական նշանակությամբ: Գիրքը բացվում է խմբագրական մուտքով, որտեղ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Աննա Ասատրյանը հաջողում է ամփոփ և բազմակողմանիորեն ներկայացնել Կոմիտասին, ինչպես նկարիչը ճեպանկար ստեղծելիս պատկերում է միայն ընդհանրական և ամենաբնորոշ գծերը, որոնք փոխանցում են գլխավորը: Պատկերագրքում ամփոփված 60 ստեղծագործությունները, չնայած նույնական թեմատիկ առանցքին՝ Կոմիտասի կերպարի ներկայացմանը, միաժամանակ, մեկը մյուսից խիստ տարբեր են թե՛ ժանրով ու ոճով, թե՛ կատարման եղանակով ու տեխնիկայով: Բնականաբար, հեղինակային համառոտ առաջաբանում հնարավոր չէր մանրամասն վերլուծության ենթարկել ներկայացված բոլոր աշխատանքները, ինչն իր խոսքում արձանագրում է Արարատ Աղասյանը: Մինևույն ժամանակ, հեղինակը, կոնկրետ շեշտադրումների միջոցով, մատուցվող նյութում տալիս է ճշգրիտ պատկերացում ներկայացվող ստեղծագործությունների մասին: Որոշ դեպքերում արվեստաբանը բարձրացնում է նաև հստակ հարցեր, ինչպես, օրինակ, Արմեն Չիլինգարյանի «Կոմիտասի թաղումը» էտյուդի թվագրման ճշգրտության խնդիրը կամ Հատիկ Գրիգորյանի գծանկարի թվագրման առաջարկը:

Պատկերագիրքն ինքնին ուշագրավ է նաև նրանով, որ այստեղ ներառված են ինչպես քաջաձանոթ գործեր, այնպես էլ քիչ հայտնի ստեղծագործություններ: Այսպես, օրինակ, եթե Սարգիս Մուրադյանի «Վերջին գիշերը: Կոմիտաս» կտավը լայն ճանաչում ունի՝ ընդգրկվելով նույնիսկ դպրոցական դասագրքերում, ապա Կարապետ Գյուլչակյանի (Գերաս) «Կոմիտասը» գրեթե անհայտ է նույնիսկ մասնագետների շրջանում: Նյութի ընտրության նման մոտեցումը նաև նոր հորիզոն է բացում հետագա ուսումնասիրողների համար:

Քանդակագործների ստեղծագործություններին անդրադարձն ընդգրկում է նաև Կոմիտասի՝ Հայաստանի սահմաններից դուրս՝ Դետրոյթում (հեղինակ՝ Արտո Չաքմաքչյան), Փարիզում (դիմաքանդակի հեղինակ՝ Արշավիր Եղիազարյան, մեծադիր արձանի հեղինակ՝ Դավիթ Երևանցի), Բվեբեկում (հեղինակ՝ Սամվել Լազարյան), Սանկտ Պետերբուրգում (հեղինակ՝ Լևոն Բեյբության) գտնվող հուշարձանները:

Պատկերագրքի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ այն ամբողջությամբ եռալեզու է (հայերեն, ռուսերեն, անգլերեն): Սա զգալիորեն մեծացնում է ընթերցողների շրջանակը՝ գիրքն արժեքավոր դարձնելով ինչպես Հայաստանի ու սփյուռքի հետազոտողների և արվեստասեր հանրության համար, այնպես էլ ռուսալեզու և անգլախոս ուսումնասիրողների համար:

Ինչամբով ու հոգածությամբ կազմված այս պատկերագիրքը յուրօրինակ երախտիքի խոսք է հայ մշակույթի մեծ նվիրյալ Կոմիտասին:

ՄԱՆԵ ՄԿՐՏՉԱՆ

Արվեստագիտության թեկնածու